ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
18.04.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՏԵԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՏԵԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
1.2 ՀՎՀՀ-ն		00007583
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Կոմիտասի պող. 19/8
1.4 Պետական գրանցման համարը		211.171.03036
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1993-12-10
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)96601101
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.karate.am
1.8 Էլեկտրոնային փոստը		annamkhitaryan1980@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՎԱԶԳԵՆ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Կարատե մարզաձևի համալիր ուսումնասիրում,պրոպագանդում և մասսայականացում		
կորդինացնել մարզաձևով զբաղվող ֆեդերացիայի կազմի մեջ մտնող անհատների գործունեությունը		
ընդլայնել ֆեդերացիայի մարզական և ուսումնական կապերը այլ երկրների հասարակական կազմակերպությունների,մարզիկների և ֆեդերացիաների		
աջակցել հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը		
հոգատարություն հանդես բերել մարզաձևի առաջատար մարզիկների,մարզիչների ,վետերանների տնտեսական,կենցաղային պայմանների բարելավման նկատմամբ		
ֆիզկուլտուրայի և սպորտի օգնությամբ երիտասարդությանը դաստիրակել ազնիվ պայքարի		
մշակել և իրագործել հանրապետությունում Կարատե մարզաձևի զարգացման ծրագրեր		
հաստատում է ֆեդերացիայի կողմից կազմակերպված կարատեի մրցումների կանոնադրությունները և հակասում դրանց իրագործումը		
ՀՀ տարածքում կազմակերպում և անցկացնում է Կարատե մարզաձևի միջազգային և հանրապետական մրցումներ՝ ֆեդերացիայի հավաքական և ակումբային թիմերի մակարդակով,		
Ֆեդերացիայի շահերն է ներկայացնում միջազգային մարզական կազմակերպություններում և մասնակցում է այդ կազմակերպությունների աշխատանքներին		
Մարզիկներին,մարզիչներին և այլ մասնագետներին օրենքով սահմանված կարգով ներկայացնում է ՀՀ մշակույթի,սպորտի և երիտասարդության նախարարությանը խրախուսման,պատվո կոչումների շնորհման		
մշակում և հաստատում է ֆեդերացիայի հավաքական թիմերի նախապատրաստման ընթացիկ և հեռանկարային պլանները		
երաշխավորում է մարզիկներին,մարզիչներին արտասահմանում պայմանագրային կարգով աշխատանքի ուղարկելու համար		
հաստատում է պաշտոնական և ոչ պաշտոնակ միջազգային մրցումների մեկնող ֆեդերացիայի թիմերի ցուցակները		
իրականացնում է սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		28
4.2 Կամավորների թիվը		15
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		2
6. Իրականացված ծրագրեր՝		

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1				

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Կարատեի մեծահասակների ՀՀ 34-րդ առաջնություն	Երևան	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
2	Եվրոպայի կարատեի մեծահասակների առաջնություն	Զադար	Ավարտված	Միջազգային մրցաշարերին մարզիկների մասնակցություն, Կարատե մարզաձևի զարգացում	Վարկանիշային միավորների բարելավում
3	Եվրոպայի կարատեի մեծահասակների առաջնություն	Թբիլիսի	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
4	Մարզիկների ֆունկցիոնալ վիճակի բարելավում (Վիտամինիզացիա)	Երևան	Ավարտված	Մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացում,չարգելված սպորտային հավելյալ սննդով ապահովում	Մարզիկների սպորտային գործունության,մրցակցայ ին արդյունավետության բարձրացում
5	Միջազգային մրցաշար կարատեի աշխարհի 13-րդ առաջնություն	Իտալիա Յեսոլո	Ավարտված	Միջազգային մրցաշարերին մարզիկների մասնակցություն, Կարատե մարզաձևի զարգացում	Վարկանիշային միավորների բարելավում

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	32,413,553
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	17,633,300	ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	17,633,300	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	33,125,136
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		33,125,136

Digitally signed by M
5209800423

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	17,633,300
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		17,633,300

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Վարձակալություն	307,500	կորդինացնել մարզաձևով զբաղվող ֆեդերացիայի կազմի մեջ մտնող անհատների գործունեությունը
Ընդամենը		307,500	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

GM CONSULT LLC

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՏԵԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԻ

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԱՏԵԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի կարատեի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «Հայաստանի կարատեի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է

տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան - 02.05.2025թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Գայանե Թովմասյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.05.2025 11:55